

ՀԱՆԳԻՍՏ
Տ. ՄԻՔԱՅԵԼ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ
(1881—1979)

1979 թվականի հուլիսի 12-ին, Բաքվի իր բնակարանում, խորը ծերության հասակում, վախճանվեց տ. Միքայել ավագ քահանա Միքայելյանը, որը երկար տարիներ նվիրումով ծառայել է իր ժողովրդին և իր եկեղեցուն՝ վայելելով բոլորի հարգանքն ու սերը, որպես ազնիվ և բարի քահանա:

Հանգուցյալ տեր հայրը ծնվել է 1881 թվականին Ղարաբաղի Սզնեք գյուղում, արհեստավորի ընտանիքում: Նա իր նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի ծխական դպրոցում, հետո ավարտել Շուշիի թեմական դպրոցը:

1916 թվականին Տ. Տ. Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի հրամանով ձեռնադրվել է քահանա և նշանակվել Ղարաբաղի շրջանի յոթ գյուղերի ծխատեր քահանա:

1932 թվականին տեղափոխվել է Բաքու և մինչև կյանքի վերջը ծառայել տեղի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, որպես ծիսակատար քահանա:

Հանգուցյալ տեր հայրը 1956 թվականին, իր եկեղեցանվեր գործունեության համար, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին կաթողիկոսի կոնդակով արժանացել է ավագության պատվի:

Հանգուցյալի վերջին օծման և թաղման արարողությունը կատարվել է Բաքվի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, և նրա մարմինը թաղվել տեղի հայոց գերեզմանատանը:

Հանգիստ և խաղաղություն տ. Միքայել քահանայի աճյուններին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: